# «ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» ԱՁ

Լիցենզիա 16910

Հեռ. +37477 32 17 17, +37491 72 74 72
ՀՀ Կոտայքի մարզ գ.Գառնի, Երևանյան փողոց փակուղի 1 տուն 2
E-mail: albertgarni@mail.ru

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱԴԻՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ,ԳԱՌՆԻ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՋՐԱՉԱՓԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

*Պայմանագիր ԱՆ 16.07.2024թ. «Գառնիի Կոմունալ Տնտեսություն» ՀՈԱԿ*



***<u>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ</u>***

## ԳԻՐՔ-1

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

**Գառնի 2024թ**

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ*

ԳԻՐՔ 1 *ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ*

ԳԻՐՔ 2 *ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ*

ԳԻՐՔ 3 *ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ*

ԳԻՐՔ 4 *ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ*

ԳԻՐՔ 5 *ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## Հիմնական դրույթներ

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի Համայնքի ***«Գառնիի կոմունալ Տնտեսություն»*** ՀՈԱԿ-ի հետ կնքած 16.07.2024թ. պայմանագրի համաձայն առաջարկվում է կատարել ՀՀ Կոտայքի մարզի Գառնի Համայնքի «Գեղադիրի խմելու ջրագծի վերակառուցում,Գառնի գյուղի ջրամատակարարման համակարգում ջրաչափական հանգույցների տեղադրում» Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ:

***Գծագրեր***

1. Գծագրերի նպատակն է տրամադրել ամբողջական ծավալով իրականացման ենթակա աշխատանքը մրցառքի մասնակիցներին՝ շինարար-կապալառուներին:
2. Բոլոր տեղեկությունները (չափեր, ծանոթագրություններ) պետք է ցուցադրված լինեն գծագրերի վրա:
3. Գծագրերը պետք է ընդգրկեն աշխատանքի բոլոր յուրահատկությունները և մրցառքի ու պայմանների շնորհման տեսակետից լինեն բավականաչափ մանրամասն: Հաշվետվությունները և մրցառքի փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի թղթային և էլեկտրոնային տարբերակով:
4. Նախագծի ամբողջական փաթեթը պետք է բաղկացած լինի հատակագծերից, կտրվածքներից, անհրաժեշտ հանգույցներից, մասնագրերից, ծավալների հաշվարկման աղյուսակներից, որոնք նշում են աշխատանքների չափերը և կատարման համար անհրաժեշտ նյութերը:
5. Նախագծի ամբողջական փաթեթը պետք է կազմվի / նախագծվի ՀՀ-ում ընդունված նորմերի և կանոնների համապատասխան:

***Ծավալների նախահաշիվ***

Ծավալների նախահաշիվը հիմնականում պետք է կազմվի նախագծային տվյալների հիման վրա և ապահովի բավարար տեղեկություն կատարվելիք աշխատանքների ծավալների վերաբերյալ, որպեսզի մրցառքի մասնակիցները ի վիճակի լինեն նախապատրաստել ծախսերի ճիշտ նախահաշիվը:

***Վերջնական նախագիծ***

Ընդհանուր առմամբ պետք է պատրաստվեն և Գառնի համայնքի «Գառնիի կոմունալ Տնտեսություն» ՀՈԱԿ-ին հանձնվեն հայերեն տարբերակով 5 գիրք, ընդ որում՝

Գիրք-1 Բացատրական մաս, ինժեներաերկրաբանական հետազոտություններ,
 1 օրինակ

Գիրք-2՝ Աշխատանքային գծագրեր 3 օրինակ

Գիրք-3՝ Աշխատանքային ծավալների ամփոփագիր 2  օրինակ

Գիրք-4 Շինարարական աշխատանքների կամակերպում 2 օրինակ

Գիրք-5 Նախահաշիվ 1 օրինակ

***Անհրաժեշտ թույլտվություններ և հաստատումներ***

Խորհրդատուի կողմից ներկայացված վերջնական նախագիծը պետք է լինեն համաձայնեցված Գառնի համայնքի ղեկավարի կողմից: Նախագիծը պետք է համաձայնեցված լինի ինժեներական ենթակառուցվածքները շահագործող կազմակերպությունների հետ:
Խորհրդատուն պարտավոր է իրականացնել նաև հեղինակային հսկողություն, որի համար կկնքվի համապատասխան պայմանագիր:

***Օժանդակություն***

Ծրագրի իրականացման նպատակով «Գառնիի կոմունալ Տնտեսություն» ՀՈԱԿ-ը խորհրդատուին տրամադրել է ծրագրի առաջարկ՝ ներառյալ աշխատանքների խմբավորված ցանկը:

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել**

- ✓ Պայմանագիր՝ 16.07.2024թ ***«Գառնիի Կոմունալ Տնտեսություն»*** **ՀՈԱԿ**
- ✓ Գառնի Համայնքի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանք
- ✓ ***«Գառնիի Կոմունալ Տնտեսություն»*** **ՀՈԱԿ-ի** կողմից ներկայացված տեխնիկական (նախագծային) առաջադրանք,
- ✓ Ինժեներա-երկրաբանական տվյալները՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ Գեոդեզիզկան հետազոտության տվյալները՝ իրականացված նախագծային կազմակերպության կողմից,
- ✓ Տարածքի կլիմայական բնութագիրը,
- ✓ Գառնի համայնքի *«Գառնիի Կոմունալ Տնտեսություն»* ՀՈԱԿ-ի ջրամատակարարման համակարգը սպասարկող մասնագետների հետ կատարված համատեղ ուսումնասիրությունները և վերջիններիս հետ հետագա վերլուծությունը:

2. **Գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգ**

**2.1 «Գեղադիրի ջրագիծ»**

«Գեղադիրի ջրագիծը» սնվում է «Յոթաղբյուր-Ողջաբերդ» Ինքնահոս ջրատարից,որը սկսվում է «Յոթաղբյուր» կոչվող աղբյուրներից: Ինքնահոս ջրատարը խմելու ջուր է մատակարարում Գառնի համայնքի՝ Գեղարդ,Հացավան, Գեղադիր և Ողջաբերդ գյուղերին:Ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 25կմ:

3. ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համաձայն Գառնի Համայնքի *«Գառնիի Կոմունալ Տնտեսություն»* ՀՈԱԿ-ի կողմից տրված նախագծային առաջադրանքի պահանջվում է կազմել՝ «Գեղադիրի խմելու ջրագծի վերակառուցում,Գառնի գյուղի ջրամատակարարման համակարգում ջրաչափական հանգույցների տեղադրում» Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքներ:

ԱՆ-ի սույն փաթեթը մշակված է համաձայն ԱՆ-ի շրջանակներում պատվիրատու կազմակերպության հետ կատարված քննարկումների և համաձայնեցման արդյունքում ընդունված որոշումների հիման վրա:

ԱՆ-ի մշակման ընթացքում մեր և Գառնի համայնքի *«Գառնիի Կոմունալ Տնտեսություն»* ՀՈԱԿ ներկայացուցիչների հետ համատեղ տեղում ուսումնասիրվել է՝ «Գեղադիրի ջրագծի» ուղեգիծը,որոշվել է վերակառուցվող հատվածը:

**Տեխնիկական (նախագծային) առաջադրանք**

1. «Գեղադիրի խմելու ջրագծի D=100մմ տրամագծի ինքնահոս ջրատարի 2000 գծմ հատվածի վերակառուցում »:

Նշված հատվածում D=100մմ պողպատե ջրատարը տեխնիկապես գտնվում է վթարային վիճակում: Անհրաժեշտ է նշված հատվածի խողովակները փոխարինել DN110մմ պոլիէթիլենե խողովակներով:

2. Գառնի գյուղի ջրամատակարարման համակարգում գոյություն ունեցող ջրաչափական հորերում նախատեսել ջրաչափական հանգույցների տեղադրում թվով 200 հատ:

***<u>Նախագծով նախատեսվում է</u>***

«Յոթաղբյուր-Ողջաբերդ» ինքնահոս ջրատարի վրա տեղադրված բաժանարար հանգույցից ջուրը բաժանվում է երկու մասի՝

- Միացում է կատարվում Հացավան գյուղի ջրագծին
- Միացում է կատարվում Գեղադիր-Ողջաբերդ ջրագծին:

Նախագծով նախատեսվում է առանձնացնել Գեղադիր և Ողջաբերդ գյուղերի ջրագծերը: Այդ նպատակով բաժանարար հանգույցից նախատեսվում է կառուցել 2 կմ ջրագիծ և այն միացնել Գեղադիր գյուղի ջրագծին: Նախատեսվում է կառուցել DN110(pe)մմ, P=10մթն.,L=2015մ երկարությամբ ջրագիծ պոլիէթիլենե խողովակներով: Ջրագծի դատարկման համար նախագծվող ջրագծի վրա,ՆԿ6+00,ՆԿ8+00,ՆԿ12+00 և ՆԿ17+00 կետերում նախատեսվում է տեղադրել թողարկ հորեր,Ե/Բ D=1.0մ,h=1.5մ,հավաքովի կլոր էլեմենտներով,որոնց մեջ տեղադրվում են DN50մմ,P=10մթն. սեպավոր փականներ: Փականներից միանում են DN63մմ, P=10մթն տրամագծի,L=20մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենե խողովակներ: Ջրագծից օդի հեռացման համար ջրագծի ՆԿ10+00,Նկ13+00,ՆԿ18+00 կետերում նախատեսվում է տեղադրել օդահեռ հորեր, Ե/Բ D=1.0մ,h=1.5մ,հավաքովի կլոր էլեմենտներով,որոնց մեջ տեղադրվում են DN25մմ,P=10մթն օդահեռներ:

Գոյություն ունեցող բաժանարար հանգույցի վրա տեղադրվում է D=2.0մ,H=1.5մ,կլոր էլեմենտներով հոր: Հորի մեջ բաժանվող ջրագծերի վրա (Հացավան,Գեղադիր և Ողջաբերդ) տեղադրվում են DN100մմ, P=10մթն. սեպավոր փականներ: Հորի կողքերը թմբապատվում է կողալիցքի բնահողով: Ջրագծի կառուցումից հետո կատարվում է փորձարկում,ջրագծի լվացում և ախտահանում,որից հետո կատարվում է ավազի պաշտպանիչ շերտի ստեղծում D+20սմ չափով: Այնուհետև կատարվում է ետլիցք կողալիցքի բնահողով և բերովի ավազով:

**Նախագիծը կատարվել է ՀՀ-ում նախատեսված շինարարական նորմերի և կանոնների համապատասխան:**

**ԱՆ-ը մշակվել է համաձայն՝**

1. **ՀՀՇՆ 40.01.02 «Ջրամատակարարում Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»**
2. **ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկանություն շինարարության նախագծման նորմեր»**

**Նախագծի գլխավոր ճարտարագետ՝ / /Ա.Հարությունյան**